

## Արձանագրություն թիվ 12

### ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍ

01 հուլիսի 2016թ.

ք.Իջևան

Նախագահ՝ Ա.Շ.Մարգարյան

Քարտուղար՝ Ք.Հ.Մխիթարյան

Կիրառական արվեստի ֆակուլտետի խորհրդի ընդլայնված նիստին մասնակցում էին ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի տնօրեն Ա.Ս.Առաքելյանը, գիտական խորհրդի անդամները, ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմը և կուրսերի ավագները: Նիստին հրավիրվել էր մասնաճյուղի ուսումնամեթոդական վարչության պետ Ա.Յ.Դավթյանը:

### Օրակարգ

1. 2015-2016 ուստարվա երկրորդ կիսամյակի քննաշրջանի արդյունքների քննարկում և ամփոփում :  
*Ձեկուցող՝ Ա.Մարգարյան*
2. 2015-2016 ուստարվա վերաբերյալ ֆակուլտետի դեկանի ամփոփ հաշվետվություն:  
*Ձեկուցող՝ Ա.Մարգարյան*
3. Ֆակուլտետի մասնագիտական ամբիոնների անհատական ծանրաբեռնվածությունների քննարկում և հաստատում:  
*Ձեկուցող՝ Ա.Մարգարյան*
4. Ընթացիկ հարցեր:

*ԼՄԵՑԻՆ* - Ֆակուլտետի խորհրդի նիստը բացեց և օրակարգը ներկայացրեց դեկանի ժ/պ, խորհրդի նախագահ Ա.Շ.Մարգարյանը:

Օրակարգը հաստատելուց հետո նիստի մասնակիցները անցան օրակարգի հարցերի քննարկմանը:

Նա ներկայացրեց 2015-2016 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի ստուգարքների և քննությունների արդյունքները և նշեց, որ ստուգարքները և քննությունները անց են կացվել համաձայն հաստատված գրաֆիկի: Ֆակուլտետի բոլոր 84 ուսանողները մասնակցել են քննաշրջանին: Ֆակուլտետի ընդհանուր առաջադիմությունը կազմում է 89,29% /անվճար-100%, վճարովի 76,9%/, իսկ ըստ կուրսերի պատկերը հետևյալն է՝ “Կիրառական արվեստ” առաջին կուրս/7 ուսանող 85,71%/, “Դիզայն” առաջին կուրս /11 ուսանող 90,91%/, “Կիրառական արվեստ” երկրորդ կուրս/7 ուսանող 85,71%/, “Կիրառական արվեստ” երրորդ կուրս /17 ուսանող 70,59%, հինգ ուսանողներ ունեն առարկայական պարտքեր/: Չորրորդ կուրսի ուսանողները ավարտական աշխատանքները և ամփոփիչ ատեստավորումը հանձնել են 100 % առաջադիմությամբ: Գնահատականների սպեկտրը լայն է և որպես կանոն ավելի բարձր է մասնագիտական բլոկի առարկաներից և ավելի ցածր հումանիտար և ոչ մասնագիտական առարկաներից:

Վերոհիշյալ փաստերը մանրամասնորեն քննարկվել և համապատասխան որոշումներ են կայացվել ֆակուլտետի 24.01.2016թ. կայացած ամբիոնների համատեղ նիստում, սակայն խորհրդի նիստում ուշադրություն հրավիրվեց չորրորդ կուրսի վրա, որտեղ կան ծայրահեղություններ, բակալավրի չորս գերազանցիկները և ակադեմիական պարտքեր ունեցողները, ինչպես նաև անկարգապահ(չորս ուսանող ունեն 60 և ավելի դասաժամ անհարգելի բացակայություն) ուսանողները նշված կուրսում են: Համաձայն ամբիոնի նիստի որոշման երկրորդ կիսամյակում ուսումնական խորհրդատուն ամենօրյա աշխատանք է իրականացրել նշված կուրսի ուսանողների հետ:

Ֆակուլտետում իրականացված բոլոր ստուգարքները և քննությունները վերահսկվել են ինչպես ֆակուլտետի ադմինիստրացիայի, այնպես էլ ուսումնամեթոդական վարչության կողմից, իսկ մասնագիտական բոլոր քննությունները ֆակուլտետում կազմված հանձնաժողովի կադմից գնահատվել և քննարկվել են ուսանողների հետ, իսկ համապատասխան բողոք առաջարկները արձագանքվել են տեղում: Հանձնաժողովի կազմի մեջ էր դեկանը, մասնագիտության պատասխանատուն, ամբիոնի վարիչը, հարակից առարկայի դասախոսը և քննող դասախոսը՝ գնահատման որոշիչ համակարգով:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Ա.Միրզոյանը, Ա.Չիբուխյանը, որոնք նշեցին առանձին ուսանողների ովքեր ցուցաբերել են ցածր առաջադիմություն և ունեն երկուսից ավելի ակադեմիական պարտքեր:

Որոշեցին- Հանձնարարել մասնագիտության պատասխանատուին ձեռնարկել միջոցառումներ ակադեմիական պարտքեր ունեցող ուսանողների խնդիրները վերացնելու համար:

Օրակարգի երկրորդ հարցի վերաբերյալ զեկուցումով հանդես եկավ դեկանի ժ/պ Ա.Շ.Մարգարյանը:

Նա ներկայացրեց 2015թ. հուլիսի մեկից մինչև այսօր ֆակուլտետում իրականացված գործընթացների վերաբերյալ հաշտվեություն՝ հիմք ընդունելով մասնաճյուղի զարգացման 2016-2020 թթ. Ռազմավարական ծրագիրը:

Լինելով առանձնահատուկ ֆակուլտետ, նպատակներն ու խնդիրները նույնպես տարբեր են մնացյալ ֆակուլտետներից: Արվեստի և արհեստի զարգացումը, տարածաշրջանում մշակույթային կյանքի աշխուժացումը, գեղեցիկի ստեղծումն ու դիզայներական ժամանակակից մոտեցումների տարածումը պետք է լինեն ոչ միայն ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական անձնակազմի, այլ նաև ուսանողների ամենօրյա գործը:

Կիրառական արվեստի ֆակուլտետը իրականացնում է երկու կրթական ծրագրեր՝ „Կիրառական արվեստ” և „Դիզայն”:

Սեպտեմբերի մեկի դրությամբ ֆակուլտետը ուներ 84 ուսանող: Նրանցից 19-ը սովորում են պետպատվեր, իսկ 65-ը վճարովի համակարգում: Աշխատակազմը բաղկացած է 19 աշխատակիցներից, որոնցից 15-ը դասավանդողներ են՝ 10-ը հիմնական, 5-ը ժամավճարային հիմունքներով, իսկ 4-ը վարչական և ուսումնասօժանակ: Ֆակուլտետում գործում են գեղարվեստական խորհուրդ և երկու ամբիոններ՝ „Գծանկարի գունանկարի և քանդակի” , „Դեկորատիվ- կիրառական արվեստի և դիզայնի”, 10 արվեստանոցներ:

Մասնաճյուղում ընդունված կարգի համաձայն յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբին քննարկվում և հաստատվում են յուրաքանչյուր ստորաբաժանման աշխատանքային պլանները, նրանց իրականացման ժամանակացույցերը՝ հաշվի առնելով տարվա առանձնահատկությունները: Այս տարի խնդիր դրվեց դասավանդողների առջև ունենալ ուսուցանվող բոլոր առարկաների առարկայական փաթեթներ՝ ինչը հաջողությամբ իրականացրին ֆակուլտետի բոլոր դասախոսները, իհարկե նրանցում կան որոշակի թերություններ, սակայն հաջորդ կիսամյակում՝ դրանք կբացառվեն:

Հարկ է նշել, որ դասավանդվող բազմաթիվ դասախոսություններ անց են կացվում նախօրոք պատրաստված ցուցադրությունների ուղեկցությամբ, ինչը ավելի մատչելի և արդյունավետ է դարձնում ուսուցման պրոցեսը: Մասնագիտական առարկաների համար իրականացվում են դասավանդման նոր տեխնիկայի ուսումնասիրություններ և մտահղացումներ:

Յուրաքանչյուր կիսամյակի ընթացքում ֆակուլտետում անց են կացվում բաց դասեր, դասալսումներ, փոխադարձ դասալսումներ՝ նախապես հաստատված գրաֆիկի համաձայն:

Ա.Շ.Մարգարյանը ընդգծեց նաև ֆակուլտետի ուսանողության շրջանում պարբերաբար իրականացվող հարցումների կարևորությունը, որը հնարավորություն է տալիս վերհանելու թերացումները և ուղիներ փնտրելու ուղիներ նրանք վերացնելու ուղղությամբ:

Ֆակուլտետում գործող ուսանողական ինքնակառավարման մարմինները՝ ՈՒԽ-ն և ՈՒԳԸ-ն հաճախակի կազմակերպում են գիտահանրամատչելի միջոցառումներ, ցուցահանդեսներ և ինտելեկտուալ խաղեր:

Ա.Մարգարյանը նշեց նաև այն մասին, որ ֆակուլտետի նյութատեխնիկական բազան անըդիստ համալրվում է, ինչի համար շնորհակալություն հայտնեց տնօրենությանը, իսկ „Դիզայն” մասնագիտության կրթական ծրագրի իրականացման համար արդեն պատրաստ է ժամանակակից էլեկտրոնային միջոցներով հագեցած համակարգչային լաբորատորիան:

Նոյեմբերի 17-ին՝ նվիրված ուսանողի միջազգային օրվան նվիրված քաղաքային պատկերասրահում կազմակերպվել է ցուցահանդես, որտեղ գերակշռում էին հենց իրենց՝ ուսանողների աշխատանքները: Կիսամյակի ընթացքում բոլոր կուրսերի ուսանողները դասախոսների ղեկավարությամբ կատարել են պլեներենային աշխատանքներ մարզի տարբեր գեղատեսիլ վայրերում (Հաղարծին, Կողբի եկեղեցի, Նոյեմբեյանի արվեստի դպրոց, Իջևանի քաղաքային զբոսայգի և այլն):

Գործունեության թափանցիկությունը ապահովելու նպատակով յուրաքանչյուր ստուգարքից և քննությունից անմիջապես հետո գհահատման ամփոփ տվյալները փակցվում են հայտարարությունների տախտակին և տեղադրվում մասնաճյուղի պաշտոնական կայք էջում: Թափանցիկ է իրականացվում նաև կրթաթոշակների նշանակումը և գեղչերի կատարումը, քանզի վերջիններիս հատկացումները իրականացնում են ուսանողական կառույցները և ներկայացնում ֆակուլտետի մանդատային հանձնաժողովի հաստատմանը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ Ա.Դավթյանը նշեց, որ բավականին դրական տեղաշարժ է նկատվում ուսանողների կիսամյակային և ավարտական աշխատանքների որակի բարելավման ուղղությամբ: Իսկ տարեկան հաշվետվության առումով առաջարկեց կատարված աշխատանքները գնահատել բավարար:

ՈՐՈՇԵՑԻՆ Մանրամասն հետևություններ անել ավարտված ուսումնական տարվա գործունեությունից և պլաններ մշակել հաջորդ՝ 2016-2017 ուսումնական տարվա աշխատանքները ավելի բարձր մակարդակով իրականացնելու համար:

Օրակարգի երրորդ հարցի վերաբերյալ տեղակատվությամբ հանդես եկավ Ա.Շ. Մարգարյանը, որի ընթացքում նշվեցին նախորդ նիստում քննարկված ամբիոնային և անհատական ծանրաբեռնվածությունները: Մասնավորապես ըստ կիսամյակների և կրթական մոդուլների յուրաքանչյուր դասավանդող իրազեկվեց իր կողմից իրականացվելիք առարկաների և նրանց ներկայացվող պահանջներին: Մատնանշվեց նաև միջառարկայական կապի կարևորությունը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ամբիոնների գրեթե բոլոր դասախոսները , որոնք վերջնական ճշտումներ արեցին ինչպես դասավանդման տեխնոլոգիայի, այնպես էլ գնահատման գործընթացի վերաբերյալ:

**ՈՐՈՇԵՑԻՆ** Հանձնարարել ամբիոնների պրոֆեսորադասախոսական անձնակազմին վերանայել նախկինում կազմված առարկայական ծրագրերը և անհրաժեշտության դեպքում կազմել նոր ծրագրեր՝ կրթական ծրագրի արդյունավետությունը բարելավելու նպատակով:

Ընթացիկ հարցերից կարևորվեց արվեստանոցների գույքի խնամքը, տեխնիկական միջոցների տարեվերջյան սպասարկումը և գույքագրումը:

Վերջում Ա.Շ. Մարգարյանը աշխատակիցներին հաճելի և բովանդակալից ամառային հանգիստ ցանկացավ և ամփոփեց նիստը:

**ՆԱԽԱԳԱՀ**

**Ա. Շ. Մարգարյան**

**ՔԱՐՏՈՒՂԱՐ**

**Ք. Հ. Մխիթարյան**